«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2018 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել բոլոր հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը 32 է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 4 տպագիր էջից:

©«Այբ» ավագ դպրոց

Պատասխաններ

Նար-Դոս «Ես և նա»

1. ա. Հակադրության միջոցով հեղինակը կապում է իրար մարդկանց պատմություններ, որոնք չէին կարող առնչություն ունենալ միմյանց հետ առաջին հայացքից: Բայց Նար-Դոսը ցույց է տալիս, որ մարդկային զգացումները նման են աշխարհի տարբեր անկյուններում ու տարբեր ժամանակներում: Մենք կարծես կարդում ենք նույն պատմությունը՝ երկու տարբեր վերաջաբաններով: Անձնական, սիրային պատմությունների՝ միմյանց կողք դրվելու, համեմատության ու հակադրության միջոցով հեղինակը խոսում է դասակարգային ու սոցիալական անհավասարության մասին:

բ. Ըստ հեղինակային ես-ի մեկնաբանության՝ այդ երկու սիրավեպերի հիմնական տարբերությունն այն է, որ իտալացի կերպարը՝ «նա»-ն, չընկճվեց դժբախտ սիրուց, ընդհակառակը՝ որպես մարտահրավեր ընդունեց դա, որովհետև իր միջավայրն էր իրեն այդպես դաստիարակել: Նա, լինելով աշխատավոր դասակարգից, սովոր էր կյանքում հանդիպելու ու հաղթահարելու բազմապիսի խոչընդոտներ: Իսկ «ես»-ը, ի տարբերություն «նա»-ի, լինելով բուրժուական միջավայրի ծնունդ, սովոր էր հեշտ ու առանց դժվարությունների կյանքին, ինչի պատճառով էլ շատ արագ ընկճվեց առաջին իսկ դժվարությունից ու չկարողացավ պայքարել:

գ. Ազատ պատասխան:

2. ա. «Նա» պատմվածքը մի երաժշտի մասին է, ով իր կամքի ուժով, համառ ջանքերի շնորհիվ թափառական ու աղքատ երաժշտից վերածվում է հռչակավոր ջութակահարի, ում մասին խոսում է ողջ Վենեցիան: Եվ այդ ամենին նա հասնում է՝ վրեժից մղված: Անտոնիոն՝ թափառական երաժիշտը, սիրահարվել էր Վենեցիայի ազնվական ընտանիքներից մեկի դստերը՝ Ջուլիետային, և ամեն օր սերենադներ էր նվագում նրա պատշգամբի տակ: Սակայն մի օր աղջիկը երկտող գցեց պատշգամբից, որտեղ գրված էր. «Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու՝ ներքևը: Էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»: Ահա այս երկտողից հետո վիրավորված Անտոնիոն որոշում է վրեժ լուծել նրանցից, ովքեր տարբերություն են դնում վերևի ու ներքևի միջև: Եվ դառնալով հռչակավոր երաժիշտ՝նա, ըստ էության, լուծում է իր վիրավորված արժանապատվության վրեժը:

բ. Ազատ պատասխան:

գ. Ազատ պատասխան:

3. Նար-Դոսը գրական անուն է, որ առաջացել է նարդոս ծաղկի անունից՝բաժանված երկու մասի: Գրողի իսկական անուն-ազգանունը Միքայել Տեր-Հովհաննիսյան է:

©«Այբ» ավագ դպրոց

Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը

1. Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց:

   (Կան այլ պատասխաններ ևս:)

2. Դյուցազներգությունը ժողովրդական ստեղծագործություն է, որի հերոսներն օժտված են գերբնական ուժով: Այն պատմական ու առասպելական իրողությունների համադրություն է ու սովորաբար ստեղծվում է տվյալ ժողովրդի կյանքում պատմական հիշարժան իրադարձությունների կապակցությամբ:

   Դյուցազներգությունը հայտնի է նաև էպոս, հերոսավեպ, դյուցազնավեպ, ժողովրդական վեպ, ասք, վիպասք, վիպերգ, վիպասանություն բնորոշումներով:

3. Ասորական դյուցազներգությունը՝ «Գիլգամեշ»

   Ֆրանսիական դյուցազներգությունը՝ «Ռոլանդի երգը»

   (Կան այլ պատասխաններ ևս:)

4. կապվեց լեզուն – փոխաբերություն

   վարդ աղջիկներ – մակդիր

5. Ըստ այս հատվածի՝ ակնհայտ է, որ Օհանը անհամարձակ է: Նա, առանց նույնիսկ հակառակվելու որևէ փորձի, միանգամից համաձայնում է Կոզբադու պայմաններին: Օհանը նա է, ով գործում է՝ ելնելով իրավիճակից. համարում է, որ Մսրը չափազանց ուժեղ է և անհնար է նրա դեմ պայքարելը, ուստի իր միակ լուծումը հզորի թելադրած կանոններին ենթարկվելն է: Նա ուզում է խաղաղություն իր Ժողովրդի համար, բայց չի հասկանում, որ խաղաղությունը նույնպես պետք է նվաճել, այլ ոչ թե մուրալ: Օհանի և Էպոսի գլխավոր հերոսների (Սանասարի ու Բաղդասարի, Մհերի, Դավթի, Փոքր Մհերի) տարբերությունն այն է, որ վերջիններս երբեք, ոչ մի պարագայում չեն հանդուրժում Սասունի ու սասունցիների ենթակա կարգավիճակը: Նրանք ամեն գնով փորձում են ձեռք բերել կամ վերականգնել իրենց երկրի ու ժողովրդի ազատությունը:

6. Ազատ պատասխան:

©«Այբ» ավագ դպրոց